ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **04/25/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Նորայր Բաղդասարյանը, Նարինե Խաչատրյանը, Ջոն Պողոսյանը, Անուշ Սուքիասյանը, Վահան Ստեփանյանը, Արման Վարդանյանը, Իզաբելա Տոմեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ասյա Հարությունյան, Բորիս Բարոյան, Անժելա Մարտիրոսյան, Նաթելլա Մուրադյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը

Նիստը արձանագրում էր ՝ Նունե Սոլոյանը

Հոսանքի անջավելու պատճառով ավագանու նիստը առցանց չի հեռարձակվել:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 25-ի հերթական նիստի օրակարգը՝
1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հաշվեկշռում հաշվառված շարժական գույքը որպես մետաղի ջարդոն օտարելուն համաձայնություն

տալու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի N33-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N27-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
5. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճների վարձակալության վճարների չափերը սահմանելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N131-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին,
7. Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ, դյուցազնագրքի և Գինեսի բազմակի ռեկորդակիր, Տաշիր համայնքի բնակիչ Արտյոմ Բագրատի Սոլոյանին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,
9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,
10. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համար 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տիպային շենքի կառուցման սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵՏԱՂԻ ՋԱՐԴՈՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հաշվեկշռում հաշվառված ֆիզիկապես ու բարոյապես մաշված, անսարք և հետագա օգտագործման համար ոչ պիտանի Նիվա մակնիշի ԽՍՀՄ արտադրության հացահատիկային կոմբայնը, որպես սև մետաղի ջարդոն, օտարել դասական աճուրդով:
2. Սահմանել գույքի մեկնարկային գինը՝ համաձայն «ՄԱՐ ՄՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված շուկայական արժեքի գնահատման հաշվետվության՝ որպես մետաղի ջարդոն՝ 1կգ- 45 (քառասունհիգ) ՀՀ դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ենթակայությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N33-Ա որոշման N8 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) 6-րդ տողի «Հաստիքային միավոր» սյունակի «3» թիվը փոխարինել «2 » թվով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի

ենթակայությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N33-Ա որոշման N8 հավելվածը լրացնել հետևյալ բողանդակությամբ նոր 21- րդ տողով՝

21	Թատերական խմբակի դասավանդող	1	105000

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների կառուցվածքը, քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N10-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N27-Ա որշման N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) «Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ» բաժնի 1-ին կետում « 1. Հավաքարար 8 » բառերը փոխարինել « 1. Հաավաքարար 9 » բառերով:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.»Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեական մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճի վարձակալության վարձավճարը սահմանել՝
1) Մարզական խմբերի համար ամսական 20000 (քսան հազար) դրամ,իսկ ջեռուցման շրջանում 30000 (երեսուն հազար) դրամ :
2) Մարզական միջոցառումների համար 1 օրվա համար՝ 20000 (քսան հազար) դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N131-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի N 798-Ն որոշման 13-րդ կետով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» » N131-Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով՝
«2. Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի կոչում ունենալու դեպքում սահմանել լրավճար նրանց համապատասխան պաշտոնային դրույքաչափի հաշվարկային հիմքի տասնհինգ տոկոսի չափով»:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ, ԴՅՈՒՅԱԶՆԱԳՐՔԻ ԵՎ ԳԻՆԵՍԻ ԲԱԶՄԱԿԻ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ԲԱԳՐԱՏԻ ՍՈԼՈՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արտյոմ Բագրատի Սոլոյանի դիմումը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Բավարարել Արտյոմ Բագրատի Սոլոյանի դիմումը և նրան ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեից տրամադրել 100000 (հարյուր հազար) դրամ որպես ճանապարհածախս՝ Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում անցկացվող ուժային եռամարտի Աշխարհի առաջնությանը մասնակցելու համար:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «Մեր ապագա» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի ղեկավարի դիմումը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Տաշիր համայնքին սեփականության իրավուքնով պատկանող, ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ.Դեմիրճյան փողոց, թիվ 68 հասցեում գտնվող, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքի N304 սենյակը անհատույց օգտագործման իրավուքնով , 1 տարի ժամկետով, տրամադրել « Մեր ապագա» կրթամշակութային բարեգործական հիմնադրամին՝ Տաշիր համայնքի երեխաներին անվճար հիմունքներով ռուսաց լեզվի պարապմունքներ անցկացնելու նպատակով

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մայիսի 22-ը՝ ժամը 14:30-ին՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում :

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 53-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համար 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տիպային շենքի կառուցման սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին» սուբվենցիոն ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 54-Ա)*

Ավագանու անդամներ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՎԻՏԱԼԻ ՅՈՒՍՈՒԲՈՎ

Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Նունե Սոլոյանը

_____